ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 սեպտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

128
(2608)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 88

«2018-ից հսկայական միջոցներ ենք ծախսել բանակի վրա, այսօր պարզվում է, որ նույնիսկ այդ տված միջոցները միշտ չէ, որ գնացել, հասել են այնտեղ, որտեղ պետք է հասնեին: Իսկ ինչո՞ւ սա պետք է ներենք ինչ-որ մեկին, ինչ «պագոն» ուզում է՝ լինի ուսին, ինչ մեդալ՝ դոշին. չկա ներում այդ մարդկանց»,- սեպտեմբերի 8-ին՝ Վլադիվոստոկում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ, նմանատիպ հայտարարություն է արել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նա նաեւ հավելել է, որ բանակից ինչ-որ մի բան գողացած ցանկացած մեկին իր անձնական թշնամին է համարելու: «Մինչեւ կյանքիս վերջ հետապնդելու եմ բոլոր հնարավոր օրինական միջոցներով: Բոլորը համաձայնել են այս պայմանին, դե թող հիմա չնեղանան, չբղավեն»,- ավելացրել է մեր երկրի փաստացի ղեկավարը:

Փաշինյանի այս հայտարարությունն ասես 2018-ի օգոստոսի 18-ին «թալանը կոպեկ առ կոպեկ հետ ենք բերելու» սերիալի երկրորդ սերիան լինի, որտեղ սերիալի բոլոր չար կերպարները հերթով, կարգով, շարքով պատասխան են տալու: Հայաստանի դեպքում, սակայն, պատասխանատվության ժամն այդպես էլ չի գալիս: Իհարկե, որեւէ մեկը չի հերքում, որ թե՛ նախկինում, թե՛ այժմ բանակից ու պետական կառավարման այլ ոլորտներից շատերն առատորեն օգտվել, թալանել ու գումարներ են լվացել, բայց մինչեւ օրս որեւէ մեկը հասցեական, կոնկրետ դատավճռով պատասխանատվության չի կանչվել, «կոպեկ առ կոպեկ» հետ չի տվել: Իրավապահ մարմինները մեկումեջ ու պարբերաբար ինչ-ինչ դեպքեր, իհարկե, բացահայտում են կամ փորձում են բացահայտել, բայց դա այդպես էլ համալիր գործընթացի չի վերածվում:

Համադրելով ՀՀ վարչապետի՝նախկինում արած նմանատիպ հայտարարությունները՝կարելի է ենթադրել, որ նա Վլադիվոստոկի հայ համայնքին հերթական անգամ խաբել է՝ վստահեցնելով, թե զինվորականների թալանածը հետ է բերելու: Շատ թալանչիներ Նիկոլի օրոք շարունակում են իրենց գործը ու մնում ազատության մեջ փաստացի:

Մեկ օրից լրանում է Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի գաղտնալսման գործով 4-րդ տարին: Դեռեւս մեկ տարի առաջ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսազրույցի գաղտնալսման գործը կարճվել էր՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունն այժմ էլ շարունակվում է: Այս գործով երեքն էլ որպես տուժող են ճանաչվել ու հարցաքննվել: Նկատենք, սակայն, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննության շրջանակներում (որը դեռեւս շարունակվում է) տուժողները հարցաքննվել են 1.5 տարի առաջ, ինչը ենթադրել է տալիս, որ գործը 1.5 տարի տեղում դոփում է: Ըստ էության՝ 4 տարվա ընթացքում իրավապահներին այդպես էլ չի հաջողվել բացահայտել գաղտնալսման դեպքն ու պարզել, թե, ի վերջո, ով էր կազմակերպել, իրականացրել, այնուհետեւ հրապարակել գաղտնալսված հեռախոսազրույցը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրավապահ համակարգը տեւական ժամանակ ուսումնասիրել է ԱԱԾ նախկին տնօրեն, «Հայրենիք» կուսակցության առաջնորդ Արթուր Վանեցյանի որդու՝ Արտյոմ Վանեցյանի՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու փաստաթղթերն ու գործընթացը: Մեր տեղեկություններով՝ այս քայլին իրավապահ համակարգը գնացել է այն բանից հետո, երբ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանն այս տարվա ապրիլին Ազատության հրապարակում նստացույց էր անում՝ պահանջելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ամիսներ շարունակ իրավապահներն ուսումնասիրել են Վանեցյանի որդու՝ բանակից ազատման բոլոր փաստաթղթերն ու եկել այն համոզման, որ Արթուր Վանեցյանի որդին օրինական ճանապարհով է ազատվել ծառայությունից, այդ գործընթացում անօրինական որեւէ բան չկա: Ասել է թե՝ նախաքննական մարմինները նյութեր են փնտրել, որպեսզի մեղադրանք առաջադրեն եւ պատժեն Վանեցյանին, բայց այդ դրվագով չեն հաջողել: Հանուն արդարության՝ նշենք, որ Վանեցյանի՝ բանակում ծառայություն չանցած որդին հոր հետ կամավորական հիմունքներով Արցախ էր մեկնել 44-օրյա պատերազմի օրերին:



Հայաստան արտերկրից ուղարկված փողերի ներհոսքը զգալի պակասել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա հուլիսին ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից ստացված տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 135 միլիոն 396 հազար դոլար: Նկատենք, որ, նախորդ ամսվա համեմատ, Հայաստան ուղարկված դրսի փողերի տրանսֆերտների զուտ ներհոսքը պակասել է 231 մլն 153 հազար դոլարով: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հուլիսին տրանսֆերտները, հունիս, մայիս եւ ապրիլ ամիսների համեմատ, շարունակել են նվազել: Բացի այս, նշենք, որ ՌԴ-ից ստացված զուտ ներհոսքը, այլ կերպ ասած՝ Հայաստան եկած ու մնացած գումարը, հուլիս ամսին կազմել է 415 մլն 842 հազար դոլար: Այս ցուցանիշը, հունիս ամսվա համեմատ, նվազել է: Հասկանալի է՝ այդ գումարների մեծ մասը փոխանցում են արտերկրում աշխատող հայերը, եւ ուղարկված գումարները այստեղ ապրող նրանց ընտանիքների ապրուստի հիմնական միջոցներն են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր բազմաթիվ են այն քաղաքացիները, որոնք Հայաստանից են գումար ուղարկում ՌԴ արտագնա աշխատանքի մեկնած իրենց հարազատներին: Փաստորեն, հուլիսին 4 մլն 703 հազար դոլարի չափով նվազել են ՌԴ-ից ՀՀ եկած տրանսֆերտները: Ի դեպ, ԱՄՆ-ից Հայաստան ստացված տրանսֆերտների ներհոսքն է ավելացել. եթե հունիսին այն կազմել է 35 մլն 353 հազար դոլար, ապա հուլիսին դարձել է 38 մլն 880 հազար դոլար:

ԱՆԱՐԴԱՐ ՆԱԽԱԳԻԾ

«ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՆ»

«Քաղաքացու որոշում» կուսակցության գործադիր մարմնի անդամ Միխայել Նահապետյանը ոչ այլ ինչ, քան կոռուպցիոն դրսեւորում է համարում Պաշտպանության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված՝ 24 մլն դրամի նախագիծը, ըստ որի՝ ժամկետային զինծառայողը մոտ 60 հազար ամերիկյան դոլար կարող է վճարել պետբյուջե, մի քանի ամիս զինծառայություն անցնել ու ազատվել բանակից: «Ժողովուրդ» օրաթերթը Նահապետյանի հետ զրուցել է այս եւ այլ հարցերի շուրջ:

-Այս օրերին հայ հասարակությունը քննարկում է ՊՆ-ի կողմից առաջ քաշած նախագիծը, ըստ որի՝ առաջարկվում է 24 մլն դրամ վճարել պետությանն ու ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից. ի՞նչ կասեք այս նախագծի մասին:

-Ես նախագիծը գնահատում եմ մի կողմից հիմար, մյուս կողմից անարդար, թե ինչո՞ւ անարդար, արդեն հասկանալի է, իսկ ինչո՞ւ հիմար, քանի որ իրատեսական չէ: Իսկ այն իրատեսական չէ մի քանի պատճառներով. առաջին՝ 50 հազար դոլարը քիչ գումար է Հայաստանի Հանրապետության ճնշող մեծամասնության համար, երկրորդ՝ այս օրենքը, որ հնարել են, շատ էժան է, եւ երրորդը, եթե ամեն ինչ գնա ըստ այս մարդկանց նախատեսածի՝ այս նախագծից օգտվելու են 50 կամ 100 անձ: Սա իրական կյանքում այնքան մեծ կիրառություն չի ունենալու, ինչքան որ «մատի փաթաթան» է դառնալու բազմահազար մարդկանց համար, եւ սա մեծ խնդիր է: Իսկ ընդհանուր առմամբ, հիմա իրենք ներկայացնում են, թե սա կոռուպցիայի դեմ ուղղված նախագիծ է: Հասկանանք՝ կոռուպցիան նյութական գործունեությամբ չունեցած իրավունքներ նվաճելն է: Իմ գնահատականն այն է, որ սա օրինական կոռուպցիա է, եւ այս նախագիծը հակահայկական նախագիծ է եւ ուղղված է պետություն դեմ:

-Մի շարք բարձրաստիճան զինվորականներ այս օրերին պատասխանատվության են կանչվում, նրանց նկատմամբ քրեական գործեր են հարուցվում: Ի՞նչ գործընթաց է սա՝ ըստ Ձեզ:

-Ինչ վերաբերում է գեներալներին, ես չէի ուզի խախտել պարոն Ջալալ Հարությունյանի եւ պարոն Միքայել Արզումանյանի անմեղության կանխավարկածը: Մի բան ակնհայտ է՝ որպես երեւույթ՝ իրենց մեղսագրվող արարքները տեղի են ունեցել, թե ում կողմից կամ ում մեղքով, եւ ինչ պայմաններում, դա պետք է պարզվի: Այն, որ մեր բանակը գտնվել է այնպիսի վիճակում, որպիսին մասամբ գրված է քրեական գործի շրջանակներում, փաստ է: Մեղքի օբյեկտիվ կողմի տակ պետք է գրվի նաեւ՝ ովքեր են դա արել: Չեմ կարծում, որ նմանատիպ խնդիրներ միայն բանակի հրամանատարական կազմն է ունեցել: Ցավալի է, որ դու ամենից շատ վստահում ես երկուսին, եւ նշանակումից հետո չեն կարողանում համակարգել: Հրամանատարից թե՛ վերեւ, թե՛ ներքեւ կարող են հանցավոր անփութություն կատարել, եւ ցավալին այն է, որ սա եղել է, կա եւ կշարունակի լինել, քանի որ չկա քաղաքական կամք:

-Սրան զուգահեռ նախկին բարձրաստիճան զինվորականներն ասում են, թե «բանակին քննադատել պետք չէ, դրա թալանի մասին խոսել պետք չէ», ու հարցաքննությունների շարքը պետք է Նիկոլ Փաշինյանից սկսել:

-Ես համաձայն չեմ այն դիրքորոշման հետ, որ սպաներին պետք չէ դիպչել եւ կամ միայն քաղաքական ղեկավարության հարցն է պետք բարձրացնել պատասխանատվության ենթարկելիս: Կարծում եմ, որ բոլոր մեղավորները պետք է պատասխանատվություն կրեն: Քաղաքական ղեկավարության պատասխանատվությունն այն է, որ իրենք չեն փոխել գոյություն ունեցող համակարգը: Զինվորականների պատասխանատվությունն այն է, որ իրենք գործող համակարգը չեն կարողացել կիրառել: Այս երկու խնդիրներն էլ հանցավոր են, եւ երկուսն էլ պետք է պատասխանատվության ենթարկվեն: Ես «կամ սա, կամ նա»-ի նշաններ չեմ ուզում շարել. բոլորը պետք է պատասխան տան: Բոլոր նրանք, ովքեր մտածում են՝ կարող են իրենց գործած մեղքը բարդել մեկ այլ անձի ուսերին, միեւնույն է, գալու է ժամանակ, որ իրենք էլ են պատասխան տալու:

-Այս ամենի համատեքստում էլ ՊՆ Սուրեն Պապիկյանը լիահույս է, որ «Մեր երազած բանակը սարերի հետեւում չէ»: Ըստ Ձեզ՝ որտեղի՞ց նման հույս նրան: Դուք պատերազմից հետո բանակի վերազինում տեսե՞լ եք, նկատե՞լ եք:

-Պարոն Պապիկյանը ճիշտ է, որ մեր երազած բանակը սարերի հետեւում չէ, եւ սարերի հետեւում ադրբեջանական բանակն է: Սա այն խնդիրն է, որի մասին պետք է մտածեն: Այդ մտածելը պետք է դրսեւորվի աշխատանքներով, որոնք այսօր չկան: Ես երաշխավորում եմ, որ այդ աշխատանքները չկան: Հայաստանը փոքր երկիր է, եւ շատերիս հարազատները ծառայում են Հայաստանի տարբեր դիրքերում եւ տարբեր պաշտոններ են զբաղեցնում, եւ մեր երկրում հնարավոր չէ համապարփակ ռեֆորմներ անել: Մեծածավալ որեւէ գործ չի արվում բանակում, այն ողբերգական իրավիճակում է թե՛ բարոյահոգեբանական, թե՛ նյութատեխնիկական եւ թե՛ ինժեներատեխնիկական առումով. բոլոր ասպեկտներում մենք մեծագույն խնդիրներ ունենք, որոնք չեն լուծվում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՊՆ-Ն ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԴԵՄ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ՏՂԱՄԱՐԴԸ

Պաշտպանության նախարարությունը դեռ շարունակում է մի քանի ադրբեջանցիների դեմ-հանդիման միայնակ դուրս եկած, բայց նրանց չհանձնված, գերի չընկած հայ տղամարդու նույնականացման աշխատանքները: Օրերս, նշենք, համացանցում տեսանյութ էր տարածվել, որ հայ տղամարդը, հայտնվելով ադրբեջանցիների շրջափակման մեջ, չի լռում, չի համաձայնում նրանց՝ գերի հանձնվելու, ու, ըստ երևույթին, հերոսաբար ընկնում է:

Ըստ Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների շահերի ներկայացուցիչ, փաստաբան Սիրանուշ Սահակյանի՝ համադրելով ձեռքի տակ եղած փաստերը, գույները, տղայի նախկին նկարները, ինչպես նաեւ երիտասարդի զինակցի պատմած տեղեկությունները, կարելի է 95 տոկոսով եզրակացնել, որ երիտասարդը Տարոն Հարությունի Անդրեասյանն է:

Պաշտպանության նախարարությունը սակայն դեռեւս չի շտապում ասել, որ տեսանյութում պատկերվածը Տարոն Անդրեասյանն է: «Նույնականացման աշխատանքները չեն ավարտվել: Չափազանց մեծ պատասխանատվությամբ ենք մոտենում հարցին, սխալվելու իրավունք չունենք: Նույնականացման աշխատանքների ավարտից հետո միայն լիարժեք, ճշգրիտ եզրակացություն կլինի»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արամ Թորոսյանը:

Նա նաեւ նշեց, որ մի քանի գործողություն է մնացել, ինչի ավարտից հետո նոր միայն ՊՆ հայտարարություն կտարածի: Այդ գործողությունները, ըստ Թորոսյանի, հիշյալ տարածքում գտնված ստորաբաժանումների անձնակազմերից անհետ կորած համարվող զինծառայողների տվյալների համեմատություններն են, հրամանատարի ու ծնողների նկարագրությունների, հրամանատարի ու ծնողների նկարագրությունների համադրումը, ինչպես նաեւ հեռախոսազրույցների վերծանումն ու այլն:

Թորոսյանը փոխանցեց՝ այդ ամենի ավարտից հետո միայն նախարարությունը կհայտնի, թե ինչպես, ինչ եղանակով է հետմահու գնահատելու ու արժեւորելու քաջ հայորդուն:

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների՝ ավտոմեքենաներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստան ներմուծման ժամանակ առաջացել են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ՌԴ նկատմամբ սահմանած պատժամիջոցների հետ: Պարզվում է, որ այդ խնդիրների մի մասը լուծվել է միջպետական մակարդակով՝ թույլատրելով համապատասխանության գնահատման ժամանակ բացի Ռուսաստանի հայտատուից՝ որպես հայտատու հանդես գալ նաեւ այլ անդամ-պետություններում արտադրողների պաշտոնական ներկայացուցիչներին:

Ի դեպ, թույլ է տրվել նաեւ ֆիզիկական անձանց կողմից եզակի տրանսպորտային միջոցների ներմուծում՝ առանց օպերատիվ ազդարարման համակարգերի առկայության:

Մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկում է ժամանակավորապես՝ մինչեւ 2023 թվականի փետրվարի 1-ը, ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների ավտոմեքենաներ արտադրողներին ներմուծել, որոնք համապատասխանում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ համապատասխանության գնահատման: Արդյունքում՝ կտրվի եզրակացություն տեխնիկական պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգով, որը, որպես համապատասխանության գնահատման փաստաթուղթ, կներառվի ազգային ռեեստրում: Այսինքն, կթույլատրվի ոչ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ ավտոմեքենաներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստան տրանսպորտային միջոցների ներմուծում եւ իրացում:

ԲԱՔՎԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Այսօր Բաքվում Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Իրանի պաշտոնյաների մասնակցությամբ տեղի է ունեցել համատեղ միջոցառում՝ նվիրված Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման հեռանկարներին:

Այս մասին հայտարարություններ են տարածել ադրբեջանական լրատվամիջոցները: Ադրբեջանի, Իրանի եւ Ռուսաստանի միջեւ տրանսպորտային միջանցքի զարգացմանն առնչվող առաջին եռակողմ հանդիպման արդյունքներով՝ միջոցառմանը ստորագրվել է Բաքվի հռչակագիրը: Նշվում է, որ հռչակագիրը ստորագրել են Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը, Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար Ռուստամ Ղասեմին եւ Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը:

Հռչակագրի համաձայն՝ կողմերը պատրաստակամություն են հայտնել համագործակցել ենթակառուցվածքների եւ տրանսպորտային հնարավորությունների գնահատման եւ վերլուծության ոլորտում՝ միջանցքի լիարժեք օգտագործման համար:

Բացի դրանից, կողմերը հայտարարել են մեկ ամսվա ընթացքում՝ Ռեշտ-Աստարա երկաթուղու նախագծի վերաբերյալ համաձայնագրի նախագիծ պատրաստելու եւ մինչեւ 2022 թվականի վերջ բանակցությունները սկսելու մտադրության մասին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՐՋ է ՏՎԵԼ ԿՅԱՆՔԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ինքնսպանության դեպք է տեղի ունեցել Հրազդան քաղաքում: Մասնավորապես՝ սեպտեմբերի 8-ին Կաքավաձորի բնակիչը, ննջասենյակից դուրս գալով, վայր է ընկել երկրորդ հարկից դեպի առաջին հարկ իջնող բետոնե աստիճանավանդակի վրա եւ մահացել:

Արդյունքում՝ իրավապահները տարեց կնոջ մահվան դեպքով կասկածներ են ունեցել եւ փորձել են հասկանալ, թե ինչ է կատարվել եւ ինչու պետք է Լ.Մկրտչյանը վերջ տար կյանքին: Մտերիմները պատմել են, որ կնոջ որդին 2 շաբաթ առաջ է մահացել, ինքն էլ, ըստ հարազատների, ունեցել է տարօրինակություններ եւ որդու կորստից դրդված նա վերջ է տվել կյանքին:

ԴԱՏԱՎՃՌԻ ՓՈՒԼ

129 հիմնական դպրոցում որպես պատմության ուսուցիչ Հակոբ Գրգորյանի գործը մոտենում իր տրամաբանական ավարտին

ArmLur.am-ը գրել էր, որ Հակոբ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, աշխատելով Երեւան քաղաքի Հր. Քոչար 29 հասցեում գործող Գայի անվան թիվ 129 հիմնական դպրոցում որպես պատմության ուսուցիչ, համաձայն չլինելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությանը, եւ քաղաքական այլ հայացքներ ունենալու հանգամանքով պայմանավորված, 2021 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, 7-րդ դասարանի պատմության դասաժամին, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, աշակերտների ներկայությամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նրա ընտանիքի անդամների նկատմամբ արել է բռնություն գործադրելու հրապարակային կոչեր, այն է՝ հայտարարել է, որ Նիկոլ Փաշինյանին պետք է սպանել, նրան եւ նրա ընտանիքին պետք է հրապարակում վառել:

Վերջինիս մեղադրանք է առաջադրվել՝ 226.2 երկրորդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը՝ պատժվում են ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Մեզ հետ զրույցում պատմության ուսուցչի փաստաբան Ռուբեն Մելիքյանը հայտնեց, որ դատարան են բերելու ձայնագրություն:

Եթե դատավոր Մնացական Մարտիրոսյանը մեղավոր ճանաչի պատմության ուսուցչին, ապա նա կամ կդատապարտվի 1-3 տարվա ազատազրկման, կամ մինչեւ 3 ամիս կալանքի, կամ էլ կտուգանվի առավելագույնը 300 հազար դրամով: Փաստաբան Ռուբեն Մելիքյանը ներկայացնում է, թե քրեական գործով ինչ ուշագրավ իրավիճակ է ստեղծվել, եւ նա միգուցե մինչեւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան կգնա:

ԲԱՔՈՒՆ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ Է

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ադրբեջանական կողմը շահագրգռված է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ: APA լրատվական գործակալության հաղորդմամբ՝ այսօր Բաքվում այդ մասին հայտարարել է Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաևը՝ Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման հեռանկարներին նվիրված միջոցառման ընթացքում, որին մասնակցում են նաեւ ռուսական ու իրանական կողմերը:

Տարածաշրջանում իրավիճակի կարգավորման գործընթացում խաղաղությունն այլընտրանք չունի, եւ դրան հնարավոր է հասնել՝ առաջին հերթին Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ միջպետական հարաբերությունների հաստատման միջոցով՝ յուրաքանչյուրի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության ճանաչման, հարգման միջոցով եւ միջազգային ճանաչված սահմանների անձեռնմխելիության հիման վրա, ասել է Մուստաֆաեւը:

Ադրբեջանի փոխվարչապետն անդրադարձել է նաեւ 3+3 ձեւաչափին: Մուստաֆաեւը նշել է, որ այդ ձեւաչափը ծառայելու է նոր ստեղծված իրողությանը, նպաստելու է տարածաշրջանի անվտանգությանը:

Հիշեցնենք, որ 3+3 համագործակցության վեցակողմ ձեւաչափը առաջարկվել էր Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Ռուսաստանն ու Իրանը ողջունեցին այս գաղափարը, Վրաստանը հայտարարեց, որ չի նախատեսում մասնակցել այս տարածաշրջանային նախաձեռնությանը, բայց Բաքվին եւ Երեւանին առաջարկում է բանակցությունների իր ձեւաչափը՝ «եռյակի» տեսքով խաղաղությունը պահպանելու համար: Պաշտոնական Երեւանն էլ հայտարարեց, որ այս «հարթակի օրակարգը պետք է միտված լինի տարածաշրջանային համագործակցության փոխշահավետ եւ փոխընկալելի օրակարգի ձեւավորմանը՝ զերծ մնալով միջազգային այլ հարթակների, այդ թվում՝ հակամարտությունների կարգավորման մանդատ ունեցող ձեւաչափերի գործունեության կրկնորդումներից»:

Շահին Մուստաֆաեւը գլխավորում է Հայաստանի հետ սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության Ադրբեջանի հանձնաժողովը, ինչպես նաեւ հաղորդակցության ուղիների վերականգնման հարցով Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի եռակողմ աշխատանքային խմբի համանախագահն է՝ իր հայ եւ ռուս պաշտոնակիցներ Միեր Գրիգորյանի եւ Ալեքսեյ Օվերչուկի հետ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՀԽ ՓՈԽՄՈԴԵՐԱՏՈՐ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 11-րդ ընդհանուր համաժողովի ընթացքում 120 երկիր ներկայացնող ԵՀԽ կենտրոնական կոմիտեի անդամները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանին ընտրել են ԵՀԽ փոխմոդերատոր:

Այս մասին հայտնում են Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից՝ նշելով, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոդերատորը եւ երկու փոխմոդերատորները գլխավոր քարտուղարի հետ միասին ղեկավարում են ԵՀԽ կենտրոնական կոմիտեն՝ վարելով կենտրոնական եւ գործադիր կոմիտեների նիստերը:

ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՄՆ ողջունում է հայ 5 ռազմագերիների վերադարձը Հայաստան: Այս մասին ասել է ԱՄՆ Պետդեպարտամենտի մամուլի քարտուղար Նեդ Փրայսը:

«Մենք ողջունում ենք հայ կալանավորների հայրենիք վերադարձի մասին հաղորդումները, ինչը դրական զարգացում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ գործընթացի համար: Մենք հուսով ենք, որ մնացած բոլոր կալանավորները եւս շուտով կվերադառնան տուն, եւ Ադրբեջանն ու Հայաստանը կշարունակեն քայլեր ձեռնարկել վստահություն ձեւավորելու եւ առկա տարաձայնությունները լուծելու համար»,- ասված է Փրայսի գրառման մեջ:

ՈՐՊԵՍ ՀՅՈՒՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 15-16-ը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում որպես հյուր կմասնակցի Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթաժողովին:

ՍՏՈՐԱԳՐԵԼ է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Վրաստանի եւ Հայաստանի էներգետիկ շուկայի օպերատորները համաձայնագիր են ստորագրել՝ արտակարգ իրավիճակներում էլեկտրաէներգիա տրամադրելու մասին:

Համապատասխան փաստաթուղթը կազմվել է Վրաստանի պետական էլեկտրաէներգետիկ համակարգի եւ Հայաստանի «Շուկայի քլիրինգի կենտրոնի» միջեւ:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության ֆինչական դեպարտամենտում պետական դավաճանության եւ լրտեսության դեպքերի առթիվ հարուցված քրեական վարույթների նկատմամբ հանրային լայն շրջանակների հետաքրքրությունը հաշվի առնելով՝ տեղեկացվում է, որ պետական դավաճանության հատկանիշներով հարուցված վարույթներից մեկով կազմվել է եզրափակիչ դատավարական ակտ եւ կալանքի տակ գտնվող անձի մասով քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է դատարան:

Քննչական դեպարտամենտում կատարված համակողմանի քննությամբ՝ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին, հավաքագրված լինելով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչների կողմից, վերջիններին փոխանցել է ծառայության բերումով իրեն հայտնի դարձած ռազմական բնագավառին վերաբերող բազմապիսի տեղեկություններ, որից հետո պարտավորագիր է գրել հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ համագործակցության վերաբերյալ, ստացել համապատասխան ծածկանուն եւ յուրաքանչյուր ամսվա համագործակցության դիմաց 500 ԱՄՆ դոլար վարձատրության խոստում:

Դրանից հետո հիշյալ անձը 44-օրյա պատերազմի ընթացքում զորամասի կազմով ընդգրկված լինելով պաշտպանության տարբեր տեղամասերում մարտական գործողությունների իրականացմանը՝ հակառակորդի կողմն անցնելով եւ նպատակ ունենալով գործել ի վնաս Հայաստանի Հանրապետության անվտանգության եւ տարածքային անձեռնմխելիության, ունենալով հրթիռավորի մասնագիտությամբ բարձրագույն զինվորական կրթություն, տիրապետելով ռեակտիվ համակարգից մարտական արձակումների հմտություններին եւ ղեկավարելով զորամասի հաշվեկշռում գտնվող ռեակտիվ համակարգերից մեկը, ՀՀ ՊՆ համար N զորամասի համապատասխան ծառայության կողմից տրված եւ վերստուգված ճշգրիտ կոորդինատների առկայության պայմաններում իր ղեկավարած մարտական ռեակտիվ համակարգից դիտավորությամբ կատարել է ոչ նպատակային կրակային արձակումներ եւ չի խոցել հակառակորդի կրակային նշանակետերը, ինչի արդյունքում՝ հնարավոր չի եղել կատարել հաշվարկի առջեւ դրված մարտական առաջադրանքը:

Արդյունքում, քրեական հետապնդման ենթակա անձը հավաքել եւ քողարկված ինտերնետային կապի միջոցով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին տեղեկություններ է տրամադրել հայրենիքի կողմից ձեռքբերված ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, պատերազմի ընթացքում ունեցած զինտեխնիկայի կորստի վերաբերյալ՝ տրամադրելով նաեւ իր ծառայության զորամասի դիվիզիոնի զինծառայողների՝ անձնակազմի քանակի, զբաղեցրած հաստիքների, ամրակցված զենք-զինամթերքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող հաստիքացուցակը, զինծառայության անցնելու պայմանների վերաբերյալ ՀՀ ԶՈՒ ղեկավար կազմի կողմից շրջանառության մեջ դրված փաստաթղթերը:

Բացի այդ, հիշյալ անձը խոստացել է հավաքել ու 4.000 ԱՄՆ դոլար վարձատրության դիմաց վերջիններին հանձնել պետական գաղտնիք հանդիսացող ՀՀ ՊՆ համար N զորամասի գաղտնի դրոշմագրով մարտական պատրաստվածության պլանը, քարտեզները եւ մարտական կարգադրությունները, սակայն չի կարողացել հանցավոր գործունեությունն ավարտին հասցնել, քանի որ բացահայտվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայողների կողմից:

Քրեական վարույթի ընթացքում ապացույցների բավարար համակցություն է ձեռք բերվել նաեւ առ այն, որ նույն անձը պատերազմի ընթացքում վարելով ՀՀ ՊՆ համար N զորամասին ամրակցված, ռազմական տեխնիկա հանդիսացող ռեակտիվ համակարգի ավտոմեքենան՝ նպատակ ունենալով դիտավորությամբ վնասել այն եւ նույն զորամասի մեկ այլ ռազմական տեխնիկա հանդիսացող տրանսպորտալիցքավորման ավտոմեքենան ու դրա վրա տեղադրված ռազմամթերք հանդիսացող ռեակտիվ արկերը, տեսնելով իր վարած տրասնպորտային միջոցի հետնամասում կայանված հիշյալ ավտոմեքենան, կտրուկ հետընթաց է կատարել եւ հետնամասով բախվել է հիշյալ ավտոմեքենային՝ վնասելով այն եւ դրա վրա բեռնված ռեակտիվ արկերը, որի արդյունքում հիշյալ ռազմական տեխնիկան 44-օրյա պատերազմի ընթացքում տեւական ժամանակ չի օգտագործվել մարտական խնդիրների լուծման նպատակով:

Այսպիսով, գործով որպես մեղադրյալ ներգրավված անձը հակառակորդին ընձեռել է իրական հնարավորություն՝ հավանական մարտական գործողությունների պլանավորման ընթացքում կատարելու ուժերի եւ միջոցների ճշգրիտ հաշվարկներ, որոշել տարբեր հատվածներում իր կողմից խնդիրների կատարմանն ընդգրկվող ուժերի եւ միջոցների քանակը, տեղակայումները, ինչպես նաեւ կանխորոշել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հատուկ կարգավիճակի զորամասերի կողմից իրենց առջեւ դրված մարտական խնդիրների բնույթը, նրանց կողմից իրականացվելիք խնդիրների հնարավոր ծավալները, եւ արդյունքում խոչընդոտել զինված ուժերի ստորաբաժանումների առջեւ դրված խնդիրների պատշաճ իրականացմանը՝ այդ կերպ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության կատարել պետական դավաճանություն:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ միայն 2022 թվականի ընթացքում պետական դավաճանություն կատարելու դեպքերով հարուցված քրեական վարույթներով ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան են հանձնվել ընդհանուր 8 քրեական վարույթներ՝ 15 անձանց վերաբերյալ:

ԿՔՆՆՎԻ

ԳՈՐԾԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի քրեական գործը Երեւանի ընդհանուր իրավասության դատարանից ընդդատության կարգով տեղափոխվել է հակակոռուպցիոն դատարան: Այս մասին տեղեկանում ենք «Դասպլեխ» տեղեկատվական համակարգից:

Հիշեցնենք՝ Գասպարյանը մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով յուրացման եւ ծանր հետեւանքներ առաջացնելով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ: Նրանից բացի այս գործով անցնում են նաեւ նախկին փոխոստիկանապետ Լեւոն Երանոսյանը՝ առանձնապես խոշոր չափերով յուրացման, ծանր հետեւանքներ առաջացնելով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական կեղծիքի հոդվածով, ՀՀ ոստիկանության ներքին աուդիտի վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Վարդան Թունյանը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն դրդելու, ծանր հետեւանքներ առաջացնելով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ խոշոր չափերով յուրացման համար, իսկ ոստիկանության զորքերի զորամասի հրամանատար Գուրգեն Գրիգորյանը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն օժանդակելու համար:

Բոլոր ամբաստանյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված հանրապետությունից չհեռանալու մասին ստորագրությունը:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

Սեպտեմբերի 8-ին արտակարգ դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 10:15-ի սահմաններում ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արցախի պողոտա 75 հասցեում գործող «Մաքուր երկաթ» գործարանի տարածքում աշխատակիցը բարձրությունից ընկել է:

Հիվանդանոց մեկնած էրեբունու ոստիկանները պարզել են, որ տեղափոխվածը Երեւանի բնակիչ 48-ամյա Կամո Մ.-ն է:

Մինչ բժիշկները պայքարել են նրա կյանքի համար, ոստիկանները պարզել են, որ Կամո Մ.-ն նույն օրը՝ ժամը 10:00 սահմաններում, գտնվել է «Մաքուր երկաթ» գործարանում, որտեղ բազմահատակային վառարանի վրա աշխատանքներ կատարելիս՝ մոտ 5-6 մետր բարձրության վրա, ըստ նախնական տեղեկությունների, անզգույշ քայլ անելիս կորցրել է հավասարակշռությունը եւ վայր ընկել, ինչի հետեւանքով էլ ստացել է մարմնական վնասվածք:

ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին ավազակային հարձակում է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 22:40-ի սահմաններում ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Առինջ գյուղում մի քանի անգամ հարվածել են խանութի աշխատակցին, այնուհետեւ նրա մոտից հափշտակել գումար եւ դիմել փախուստի: Պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 22:00-ից 22:30-ն ընկած ժամանակահատվածում, Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի բնակիչ ոմն գյումրեցի Գարեգինը նշված փողոցում գործող խանութում հարձակվել է Կոտայքի մարզի բնակիչ՝ 70-ամյա աշխատակցուհու վրա, մի քանի անգամ հարվածել դեմքին եւ աչքին, ապա վերնաշապիկի գրպանից հափշտակել մոտ 250 հազար դրամ եւ դիմել փախուստի: «Աբովյան» բժշկական կենտրոնից ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգ է ստացվել, որ «աջ աչքի փափուկ հյուսվածքների սալջարդ, հեմատոմա» ախտորոշմամբ շտապօգնության բժիշկների խումբը բուժօգնություն է ցուցաբերել 70-ամյա կնոջը: Ոստիկաններն ու քննիչները տաք հետքերով պարզել են, թե որտեղ է գտնվում նշված հանցագործությունը կատարած անձը եւ նրան Երեւան-Սեւան ավտոմայրուղու Աճառյան փողոցի վրա գտնվող «Համով տնակ» հացատան մոտից ավազակային հարձակում կատարելու կասկածանքով բերման են ենթարկել ոստկանության Կոտայքի բաժին, որտեղից էլ նրան ներկայացրել են Աբովյանի քննչական բաժին: Կասկածյալը Կոտայքի մարզի բնակիչ 29-ամյա Գարեգին Բ-ն է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 61 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՐԿԻՆ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Արման Սպարտակի Եգանյանը հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի Իջեւանի մասնաճյուղի եւ խնդրել է անվավեր ճանաչել կարգապահական տույժի ենթարկելու մասին «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի 2022թ. հունիսի 14-ի թիվ 108/2 հրամանը: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Աշոտ Ջավախյանը հայցադիմումը ընդունել է վարույթ, նախնական դատական նիստ նշանակել սեպտեմբերի 28-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում: Ներկայումս Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի դեմ այդ մասնաճյուղի աշխատակցի կողմից ներկայացված հայցով այլ քաղաքացիական գործ է քննվում: Անուշավան Մակարյանը ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարն է շուրջ 4 տարի՝ 2018թվականից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Սեպտեմբերի 25-ին կկայանան Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: Այդ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուների թիվը 58 է, «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքը՝ «Արժանապատիվ սերունդն» ունի 27 թեկնածու, «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի «Ռեֆորմիստների» կուսակցությունների կազմած դաշինքը՝ «Զորավոր համայնքը» ներկայացրել է 62 հոգանոց նախընտրական ցուցակ: Բերդ խոշորացված համայնքի ավագանու 21 տեղի համար գրանցված է ընդհանուր թվով 147 թեկնածուով: Ավագանու ՔՊ կուսակցության 58 թեկնածուների ցանկում 23-ը թիվ 38 ընտրածքային ընտրական հանձնաժողով ներկայացրած իրենց հայտարարագրերում նշել են, որ աշխատանք չունեն: ՔՊ-ի նախընտրական ցուցակում շատ են պետական աշխատողները: Ցուցակի առաջին համարը միասնական սոցիալական ծառայությունների Բերդի կենտրոնի տնօրեն Վահրամ Սուքիասյանն է, 3-րդ համարը՝ Բերդի բազմագործառնութային պետական քոլեջի տնօրեն Աննա Ավալյանը: ՔՊ-ի թեկնածուների ցանկում ներառված են պետական հանրակրթական դպրոցի 4 տնօրեն, այդ դպրոցների 5 մանկավարժ, Արծվաբերդի անտառտնտեսության անտառապետ, տեղամասի պետ, անտառտնտեսության 5 անտառապահ, ՀՀ պաշտպանության նախարարության տրանսպորտի պատասխանատու, Բերդի ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, պետական բժշկական հիմնարկների 2 աշխատող, տարբեր հիմնարկների երկու վարորդ եւ այլն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՆԱՐԱՐԳԻՆ»

ԱԿՏԻՎ ՀԱՎԵԼՈՒՄ՝ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում մշակվել եւ պատշոնապես գրանցվել է սննդի «Նարարգին»՝ կենսաբանորեն ակտիվ հավելումը: Ինչպես հայտնում են Գիտությունների ազգային ակադեմիայից, այն օգտագործվում է դիսբակտերիոզի, 2-րդ տիպի շաքարախտի կանխարգելման համար, աղիքային միկրոֆլորայի հավասարակշռությունը պահպանելու եւ վերականգնելու նպատակով հակաբիոտիկներով բուժման ընթացքում, նպաստում է արյան մեջ խոլեստերինի մակարդակի նվազեցմանը:

««Նարարգին» կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումն ունի կիրառական նշանակություն՝ բժշկության մեջ որոշակի հիվանդությունների կանխարգելման եւ բուժման համար: Նպաստում է ինսուլին արտադրող B-բջիջների վերականգնմանը եւ ենթաստամոքսային գեղձի արտազատիչ ֆունկցիայի խթանմանը, ինչը 2-րդ տիպի շաքարախտի բուժման հիմնական նպատակներից մեկն է: Կարգավորում եւ վերականգնում է աղիքային միկրոֆլորայի հավասարակշռությունը հակաբիոտիկներով թերապիայի կիրառման, ինչպես նաեւ դիսբակտերիոզի դեպքում: Բերում է արյան մեջ խոլեստերինի մակարդակի նվազեցմանը»,- ասել է «Նարարգին» սննդային հավելման մշակման հեղինակ, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Պրոբիոտիկների կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Ֆլորա Տխրունին:

«Նարարգին»-ը մշակվել է թիրախային բազմաֆունկցիոնալ հատկություններով օժտված Lactobacillus acidophilus MDC 9602 (Ep. 317/402) եւ Lactobacillus rhamnosus БТК 20-12 MDC 9631 պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների կոնսորցիումի հիման վրա: Այդ կաթնաթթվային բակտերիաները սինթեզում են նյութափոխանակության կենսաբանորեն ակտիվ արգասիքներ՝ արգինինի ամինաթթուն, արտաբջջային բազմաշաքարներ եւ հակամանրէային միացություններ՝ բակտերիոցիններ, որոնք ճնշում են սննդի փչացմանը հանգեցնող միկրոօրգանիզմների, հակաբիոտիկների հանդեպ բազմակի կայուն մանրէների աճը:

Ֆլորա Տխրունու խոսքով՝ կոնսորցիումի կազմի մեջ մտնող կաթնաթթվային բակտերիաների կողմից արգինինի սինթեզման եզակի հատկությունը նպաստում է ինսուլին արտադրող B-բջիջների վերականգնմանը եւ ենթաստամոքսային գեղձի՝ արտազատիչ ֆունկցիայի խթանմանը, քանի որ L- արգինինը խթանում է ինսուլինի արտանետումը եւ մեծացնում B-բջիջների զգայունությունը գլյուկոզի նկատմամբ, ինչը շաքարախտի բուժման հիմնական նպատակներից մեկն է»,- ասաց Ֆլորա Տխրունին:

«Նարարգին»-ը ստեղծվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի կողմից բազային ֆինանսավորմամբ իրականացվող «Որոշակի հիվանդությունների կանխարգելման համար նոր պրոբիոտիկ շտամների հատկությունների ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում:

«Նարարգին»-ն արտադրված է համաձայն ՀՀ ՏՊ 39377614.8805-2021:

2022թ-ին «Նարարգին» կենսաբանորեն ակտիվ հավելումը պաշտոնապես գրանցվել է եւ ստացել պետական գրանցման վկայական՝ թիվ ԱՄ.01.01.01.003.R000016.01.22:

«Ներկայում տարվում են աշխատանքներ մարքեթինգի՝ «Նարարգին»-ի ներքին, ինչպես նաեւ արտաքին շուկայում իրացման ուղղությամբ: Ձեռք են բերվել համագործակցության նախնական պայմանավորվածություններ Ռուսաստանի Դաշնությունում, Չեխիայի Հանրապետությունում «Նարարգին»-ի ներդրման ուղղությամբ»,- ասել է Ֆլորա Տխրունին:

«Նարարգին»-ի հետազոտությունն արժանացել է դրական գնահատականի գիտական հանրության շրջանում, այդ թվում՝ միջազգային:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

Ուսումնական այս տարվա սկիզբը fրեակատարողական համակարգում առանձնահատուկ է նրանով, որ այսուհետ պետական աջակցության միջոցով 19 տարեկանից բարձր տարիք ունեցող դատապարտյալները կկարողանան ստանալ միջնակարգ կրթություն, ինչն աննախադեպ երևույթ է համակարգի պատմության մեջ: ԱՆ-ից հայտնում են, որ պետական օժանդակությամբ դատապարտյալները կանցնեն խտացված եւ անհատական ուսումնական ծրագիր՝ պատրաստվելով միջնակարգ կրթության վկայական ստանալու համար պահանջվող քննություններին:

Արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանն ԱՆ քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գեներալ-մայոր Սերգեյ Ատոմյանի ուղեկցությամբ այցելել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ տեղում ծանոթանալու դասապրոցեսին:

Փոխնախարար Սարգսյանը մասնակցել է 19 տարեկանից բարձր անձանց հանրակրթության իրականացման գործընթացին, զրուցել դատապարտյալների եւ ուսուցչական անձնակազմի հետ:

Սարգսյանը շնորհավորել է կրթական գործընթացի մասնակիցներին ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ եւ փաստել, որ Արդարադատության նախարարության ջանքերով կրթությունն այլեւս հասանելի է այն դատապարտյալներին, որոնք տարբեր պատճառներից ելնելով չեն ստացել միջնակարգ կրթություն:

«Կրթությունն է թե՛ ինքնազարգացման, թե՛ վերափոխվելու, թե՛ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտացմամբ աշխատելու հենքը: Պետական այսպիսի աջակցությունն իրապես աննախադեպ հնարավորություն է ձեզնից յուրաքանչյուրի համար, որից պետք է միանշանակ օգտվել: Այսպիսի հնարավորություն անգամ շատ ու շատ առաջադեմ երկրներում չկա, ուստի մեր ուսուցչական անձնակազմի օժանդակությամբ պետք է մոտիվացված կերպով շարունակեք կրթվել, լցնել ձեր առօրյան օգտակար զբաղվածությամբ:»,- նշել է Սարգսյանը:

Նա հորդորել է դատապարտյալներին իրենց օրինակով մոտիվացնել նաեւ մյուս դատապարտյալներին, չհուսահատվել կրթական գործընթացի շրջանակներում հնարավոր տարբեր բարդություններից, բարձրաձայնել կարիքները, որոնք թույլ կտան ըստ անհրաժեշտության փոփոխել ուսման կազմակերպման մեթոդները, եւ գիտելիքների պաշարն ամրապնդել:

Փոխնախարար Սարգսյանը նաեւ շրջայց է կատարել հիմնարկի տարածքում, զրուցել է դատապարտյալների հետ, ծանոթացել հիմնարկի օդափոխության համակարգի ներդրման աշխատանքներին, որոնք, ըստ նախնական պլանավորման, տարեվերջին ավարտին կհասցվեն:

Այցին մասնակցել են նաեւ Արդարադատության նախարարության, Քրեակատարողական ծառայության ղեկավար անձնակազմի ներկայացուցիչները, «Իրավական կրթության եւ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Զոնիկ Մարգարյանն ու աշխատակիցները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 23 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Արցախի Հանրապետության պետական նախարար Արտակ Բեգլարյանը սեպտեմբերի 8-ին հրավիրել է ընդլայնված խորհրդակցություն՝ բարձրագույն կրթության համակարգի ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի շուրջ՝ մասնակցությամբ ԿԳՄՍ նախարարության պաշտոնյաների, ԱԺ պատգամավորների, բուհերի եւ միջին մասնագիտական հաստատությունների ղեկավարների:

«Հանրապետության նախագահի ծրագրի հիման վրա, ինչպես նաեւ 2020թ. հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ արդեն 2 տարի է, ինչ գրեթե բոլոր ուսանողները ուսման վարձի փոխհատուցում են ստանում կառավարության կողմից: Այժմ մենք խնդիր ունենք 2022-23 ուստարվա փոխհատուցումների տրամադրման կարգը հաստատելու՝ հաշվի առնելով նախընթաց շրջանի փորձը: Մենք պետք է անվճար կրթության այս մեխանիզմով ապահովենք թե՛ Նախագահի ծրագրի իրականացումը, թե՛ կրթության որակի խթանումը եւ թե՛ սոցիալական երաշխիքների կիրառումը»,- նշել է պետական նախարարը:

Արտակ Բեգլարյանը տեղեկացրել է, որ համապատասխան նախագիծը գրավոր ուղարկվել է բուհեր, միջին մասնագիտական հաստատություններ եւ բոլոր շահագրգիռ դերակատարներին, իսկ քննարկումն էլ թույլ կտա ունենալ առավել կատարելագործված փաստաթուղթ:

ՓՈԽՎԵԼ Է

Հայաստանի տնտեսական անբարենպաստ իրավիճակը փոխեց Ռուսաստանից զբոսաշրջիկների մեծ հոսքը: 2022 թվականի բյուջեի նախագծով որոշել է, որ տնտեսական աճը պետք է լինի 7 տոկոս: Միեւնույն ժամանակ դրա համար հիմքեր չկար, քանի որ բյուջեի նախագծում հիմնականում նշված էին 5-7 տոկոս: Այս մասին ասել է ՀՅԴ Բյուրոյի Տնտեսական հետազոտությունների գրասենյակի ղեկավար, տնտեսագետ Սուրեն Պարսյանը: Այդուհանդերձ, կառավարությունը, ինչպես նշեց փորձագետը, չգիտես ինչու որոշել է հայտարարել ու հանրությանը ներկայացնել ամենաբարձր ցուցանիշը: Սակայն, ըստ Պարսյանի, սա կառավարության կողմից արվող ոչ առաջին եւ ոչ վերջին նման կանխատեսումը չէ: «Այսպես, կառավարության եւ Կենտրոնական բանկի ուսումնասիրությունների համաձայն՝ որոշվել է կանխատեսումներում հնչած այս տարվա տնտեսական աճի ցուցանիշները նվազեցնել մինչեւ 1,5 տոկոս: Հետագայում, սակայն, այս ցուցանիշը վերանայվել է՝ կազմելով 3,7 տոկոս: Հիմա խոսում են 7 տոկոսի մասին»,-պարզաբանեց տնտեսագետը: Տնտեսական անբարենպաստ իրավիճակը, նրա կարծիքով, փոխեց Ռուսաստանից զբոսաշրջիկների ու վերաբնակեցվածների հսկայական հոսքը: Ռուսական կապիտալը հոսեց Հայաստան:

«Այս ամենն անշուշտ ազդեց մեր տնտեսական աճի ցուցանիշների վրա: Մեր տնտեսության համար սա չափազանց անկանխատեսելի դրական երեւույթ էր: Հայաստանի կառավարությունում ներկայացված տնտեսական բլոկի ներկայացուցիչները չէին էլ կարող երազել այս մասին: Նրանք չէին կարող նման բան կանխատեսել»,-ասաց փորձագետը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 9

FINTECH360 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

2022 թվականի նոյեմբերի 2-5-ը Երեւանում կանցկացվի FINTECH 360 միջազգային համաժողովը, որտեղ տարբեր երկրներից փորձագետներ կքննարկեն նորարարական տեխնոլոգիաները եւ ֆինանսական հատվածի թվային վերափոխման արդիական հարցերը: Միջոցառումը մեկ հարթակի վրա կմիավորի առաջատար բանկերի եւ ֆինանսական հաստատությունների, վճարային համակարգերի, հեռահաղորդակցության եւ SS ընկերությունների, մասնագիտացված ասոցիացիաների, ստարտափների եւ վերահսկող կազմակերպությունների ղեկավարներին:

Համաժողովը կանցկացվի «Յունիբանկ» ԲԲԸ-ի եւ «Յունիստրիմ» միջազգային դրամական փոխանցումների համակարգի աջակցությամբ:

FINTECH360-ում կքննարկվեն մոբայլ ծառայությունների եւ անհպում վճարումների, մարքեթփլեյսների եւ բանկային էկոհամակարգերի, թվային արժույթների, միջբանկային վճարումների, կրիպտոարժույթների հաշվարկների, նեոբանկերի, Open Banking-ի եւ կանաչ ֆինտեխի զարգացման հետ կապված հարցեր: Փորձագետները կկիսվեն համապատասխանության ռիսկերի կառավարման, անձնական տվյալների պաշտպանության եւ տեղեկատվական անվտանգության բարձրացման, արհեստական բանականության եւ Big Data-ի ներդրման ոլորտում իրենց փորձով:

«Ֆինտեխը չափազանց ինտենսիվ է զարգանում, ուստի մեզ համար կարեւոր է տեղեկացված լինել հիմնական միտումներին եւ արդյունավետ աշխատել արագ փոփոխվող միջավայրում: Ֆինանսական ծառայությունների սպառողներին առաջարկելով նորարարական լուծումներ՝ մենք բարելավում ենք ոչ միայն բանկային սպասարկման մակարդակը, այլեւ մարդկանց կյանքի որակը: Այդ իսկ պատճառով մենք այդքան շահագրգռված ենք FINTECH360 համաժողովով, որն ավանդաբար համախմբում է փորձագետների եւ գործարար համայնքի ներկայացուցիչների լայն շրջանակ՝ թույլ տալով թարմացնել նորարարական ֆինանսական տեխնոլոգիաների մասին գիտելիքները, փոխանակել փորձը եւ ձեռք բերել օգտակար շփումներ բիզնես միջավայրում: Ուրախ ենք հրավիրել մեր գործընկերներին՝ մասնակցելու Երեւանում կայանալիք համաժողովին. այն կլինի տեղեկատվական եւ օգտակար»,- մեկնաբանում է Յունիբանկի Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը:

Համաշխարհային վիճակագրությունը հստակ ցույց է տալիս ֆինանսական տեխնոլոգիաների դինամիկ զարգացումը: Ըստ KPMG-ի, եթե 2020 թվականին 121,5 միլիարդ դոլար է ներդրվել ֆինտեխ ստարտափներում, ապա 2021 թվականին ներդրողներն ընդհանուր առմամբ 210 միլիարդ դոլար են ներդրել ֆինտեխի մշակման ոլորտում:

Ըստ Ernst & Young-ի, ֆինտեխ ծառայությունների ներթափանցման մակարդակը 2015-ի 16%-ից աճել է մինչեւ 64% 2019-ին: Սպառողների 96%-ը տեղյակ է առնվազն մեկ ֆինտեխ ծառայության մասին, որը թույլ է տալիս գումար փոխանցել եւ վճարումներ կատարել:

«Մենք ուրախ ենք, որ կորոնավիրուսի համաճարակի պատճառով հետաձգված FINTECH360 համաժողովն այս տարի կանցկացվի Երեւանում: Աշխարհը փոխվել է. հեռավար աշխատանքի ձեւաչափն ազդել է սպառողների, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների վարքագծի վրա, լայն տարածում են գտել վճարումների անշփում ձեւերը, մոբայլ հավելվածների շնորհիվ դրամական փոխանցումներն ավելի արագ եւ հարմարավետ են դարձել: Մենք ներդրում ենք ֆինտեխը բոլոր մակարդակներում եւ մեր աշխատակիցների եւ գործընկերների հետ քննարկելու համար կուտակել ենք բազմաթիվ թեմաներ: Համեցեք, հետաքրքիր կլինի»,- հրավիրում է «Յունիստրիմի» Վարչության նախագահ Կահիրժան Կուդյարովը:

Համաժողովը կանցկացվի Երեւանի կենտրոնում գտնվող Holiday Inn Yerevan Republic Square հյուրանոցի դահլիճում: Հարուստ բիզնես ծրագիրը, ներառյալ՝ պանելային քննարկումները եւ թեմատիկ կլոր սեղանները, կլրացվեն հիշարժան մշակութային միջոցառումներով եւ հետաքրքիր էքսկուրսիաներով: Մասնակիցները կայցելեն Խոր Վիրապի վանք, Գառնի եւ Գեղարդ:

Համաժողովի եւ գրանցման մանրամասները՝ fintech360.io կայքում:

ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՀԸ. «ԼՈՆԴՈՆԻ ԿԱՄՈՒՐՋՆ ԸՆԿԵԼ Է»

Լոնդոնի կամուրջն ընկել է. Եղիսաբեթ Թագուհու մահվան մասին հենց այս նախադասությամբ հայտարարվեց: Բանալի բառը կամ կողը դեռ վաղուց՝ նրա մահվանից տարիներ առաջ էր ընտրվել: Հստակ էր նաեւ՝ երբ թագուհին մահանա ու լուրը բրիտանացի ժողովրդին հայտնելու ժամանակը գա, Բուքինհեմյան պալատի դռնից դուրս կգա մի սգավոր մարդ, կանցնի բակն ու առանց որեւէ բառ ասելու «Լոնդոնի կամուրջն ընկել է» հայտարարությունը կկախի սգո շրջանակի մեջ՝ դարպասի վրա. սա հին ու գեղեցիկ ավանդույթ է:

96 տարեկան էր Եղիսաբեթ Ալեքսանդրա Մերի Վինձորը, առավել հայտնի է՝ որպես Եղիսզաբեթ 2-րդ: Նա Բրիտանիայի պատմության մեջ ամենաերկար գահակալած թագուհին էր՝ 70 տարի: Եղիսաբեթ 2-րդը բրիտանական գահին էր 1952 թվականից: Նրա գահակալման տարիներին միլիոնավոր բրիտանացիներ են ծնվել, ապրել, ապրեցրել ու այն աշխարհ գնացել՝ բրիտանական գահին այդպես էլ այլ միապետի չտեսնելով: Այժմ, երբ թագուհու գահակալումն արդեն անցյալ է, բոլորի մոտ հարց է առաջանում՝ ինչ սպասում այժմ: Մեծ Բրիտանիայում բացարձակապես ամեն ինչ կանգ կառնի. դպրոցներում դասերը կդադարեցվեն, հանրային հաստատությունները կփակվեն, կսգան անգամ պետական ու մասնավոր գրասենյակների աշխատակիցները, բորսան եւ բանկերը կդադարեն աշխատել: Հեռուստատեսությամբ ու ռադիոյով միայն դասական ու հոգեւոր երաժշտություն կհնչի: Եվ դա ոչ մեկ ժամ կամ մեկ օր. բրիտանացիների սուգն ուղիղ 12 օր կտեւի: Բրիտանական բոլոր լրատվամիջոցները՝ հարգի ու հանրահայտ լրատվական գործակալությունները, տպագիր մամուլը նախապես պատրաստած մահախոսականները կտպագրեն, եւ դա շրջանցել որեւէ մեկը չի կարող, քանի որ թագուհու մահը, թեեւ տխուր, բայց մեծագություն իրադարձություն է ամբողջ աշխարհի համար:

Այսպիսով՝ սուգն առնվազն 12 օր կտեւի: Կարծում ենք՝ հարկ չկա հավելյալ բացատրելու, որ ժամանակակից աշխարհում նման կանգառը հսկայական ֆինանսական կորուստներ է նշանակում, հատկապես, որ Լոնդոնը ֆոնդային բորսան միլիարդներ կարող է կորցնել:

Ավանդույթի համաձայն՝ թագավորական իշխանությունը երբեք չի ընդհատվում: Մի միապետի պաշտոնավարման դադարից անմիջապես հետո իրավահաջորդը զբաղեցնում է նրա տեղը: Այդ իսկ պատճառով սգո օրերին թագավորական դրոշը մյուս դրոշների նման չի խոնարհվում: Միացյալ Թագավորությունն արդեն հայտարարել է՝ Բրիտանիայի նոր թագավորը Չարլզ 3-րդն է: Նա 74 տարեկան է: Թագու մահվան պատճառով կփոփոխվի նաեւ Բրիտանիայի ազգային օրհներգը, դրա «Աստված պահապան թագուհուն» բառերը պետք է փոխարինվեն «Աստված փրկիր թագավորին» բառերով: Նաեւ նոր՝ թագավորի պատկերով ու նրան նվիրված նոր մետաղադրամներ եւ թղթադրամներ կթողարկվեն, ոստիկանության սաղավարտները նոր մակագրություն կունենան, դրանք այժմ թագուհու անվան սկզբնատառերն են: Թագուհու պատկերով փոստային նամականիշները շրջանառությունից դուրս կգան:

Թագուհու դիակը Բուքինհեմյան պալատում մի քանի օր կմնա, ինչի ժամանակ մարդիկ կկարողանան Եղիսաբեթ թագուհուն հարգանքի տուրք մատուցել ու վերջին հրաժեշտը տալ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

Օ.ԴՈՒՐՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության ժողովրդական արտիստ, անվանի երաժիշտ եւ դիրիժոր Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Օհան Դուրյանի այրին՝ Ալիս Դուրյանը, հասարակական, մշակութային գործիչ Վահան Վարդապետյանը, հոբելյանական հանձնաժողովի անդամներ, պետական, հասարակական, մշակութային գործիչներ, մտավորականներ, տարբեր կառույցների ներկայացուցիչներ, արվեստագետներ այցելել են Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Մեսրոպի հիշատակին եւ ծաղիկներ խոնարհելու նրա շիրիմին:

Այս մասին հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը կիսվել է իր հիշողություններով եւ պատմել որոշ դրվագներ Օհան Դուրյանի մասին. «Ուզում եմ բոլորիս շնորհավորել այսօրվա կապակցությամբ, քանի որ նշում ենք Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակը: Ես այն բախտավորներից մեկն եմ, ով հնարավորություն եւ պատիվ է ունեցել 1993 թվականից ճանաչել Մաեստրոյին, շփվել նրա հետ: Նա իր կյանքում երբեւէ չդավաճանեց այն սկզբունքներին, որոնցով ապրել էր: Այդ սկզբունքների պատճառով նա շատ է տուժել՝ սկզբում Խորհրդային Հայաստանում, երբ ստիպված էր ուղղակի լքել իր հայրենիքը, հետո մեր անկախ Հայաստանում: Սակայն կարծում եմ՝ այսօր ամենակարեւորն այն է, որ մենք հնարավորություն ունենք պետական մակարդակով նշել Մաեստրոյի հարյուրամյակը: Նա ուղղակի չէր հանդուրժում կեղծիքը, հատկապես՝ մասնագիտական շրջանակում: Ովքեր աշխատել են Մաեստրոյի հետ, գիտեն, թե ինչպիսին էր նա իր գործում»:

Հոբելյանական միջոցառումների մեկնարկը կտրվի Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի Երեւանյան 14-րդ միջազգային երաժշտական փառատոնով, որն ամբողջությամբ նվիրված է Օհան Դուրյանի հոբելյանին: Սեպտեմբերի 13-ին ժամը 19:00-ին Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտում կկայանա Կենտրոնական բանկի կողմից թողարկված Օհան Դուրյանի անվամբ արծաթե հուշադրամի շնորհանդեսը, միեւնույն ժամանակ ԲՏԱ նախարարության եւ «Հայ փոստի» կողմից կթողարկվի Օհան Դուրյանի 100-ամյակին նվիրված նամականիշ:

Հանրային հեռուստաընկերությունը մեծ եթերաժամով անդրադառնալու է 100-ամյակին՝ երեք տարբեր ուղղություններով: Առաջին հերթին հրապարակվելու են արխիվային բացառիկ տեսանյութեր, երկրորդ՝ Ստաս Նամինի 2006 թ. Օհան Դուրյանին նվիրված ֆիլմը մշակվում է եւ թարգմանվում հայերեն: Եվ երրորդ՝ 100-ամյակին նվիրված բոլոր միջոցառումները ակտիվորեն կհեռարձակվեն:

Հայաստանի հանրային ռադիոընկերությունը թվայնացրել է Օհան Դուրյանի ձայնագրությունները, որոնք արդեն հասանելի են լայն հանրությանը: Շուտով կթողարկվի Օ. Դուրյանի ստեղծագործությունների ամբողջական ժողովածուն:

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի եւ Ազատության հրապարակի հարակից տարածքում կտեղադրվի Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանի հեղինակած՝ Օհան Դուրյանի քանդակը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԵՅԸ ԿԻՍՎԵԼ Է

«ԵՍ ԻՆՁ ԶԳՈՒՄ ԵՄ ԻՆՉՊԵՍ ՏԱՆԸ»

Լեգենդար Queen խմբի կիթառահար, STARMUS-ի համահիմնադիր Բրայան Մեյը կիսվել է Երեւանում անցկացվող STARMUS VI փառատոնի շրջանակում ստացած տպավորություններով, հույս հայտնել, որ մի օր կրկին կվերադառնա Հայաստան:



«Երեւան, Հայաստան. դա շատ զգացմունքային էր, ռիսկային, ուրախ, աննկարագրելի: Ամիսների նախապատրաստությունից, քննարկումներից, փորձերից հետո մենք այնքան արագ հայտնվեցինք բեմում, եւ այնքան արագ, շատ արագ դա տեղի ունեցավ, մենք խոնարհվում էինք մեր հանդիսատեսի առաջ՝ վայելելով նրանց երջանիկ ձայները»,- նշել է Մեյը:

Ապա նա հավելել է.

«Ես նույնիսկ բառերով չեմ կարող նկարագրել, թե անձամբ իմ հանդեպ սիրելի հայերի ընդունելությունն ինչ նշանակություն ուներ. այնքան սեր կար, ասես վաղուց կորած եւ վերադարձող երեխա կամ ամուսին, կամ պապիկ լինեի... Շատ շնորհակալ եմ: Ես ինձ լիովին զգում էի ինչպես տանը»:

Նա հույս է հայտնել, որ մի օր կվերադառնա՝ գուցե այլ հանգամանքներում:

ԼՈՒՐԵՐ

«ՓՅՈՒՆԻԿԸ» ՋԻՋԵՑ

Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլի մեկնարկում Երեւանի «Փյունիկը» մրցեց Շվեյցարացկան «Բազելի» հետ: Հայաստանի չեմպիոնը մեկնարկային տուրում 1: 3 հաշվով զիջեց «Բազելին»: Երեւանյան ակումբի կազմում աչքի ընկավ միայն Արտակ Դաշյանը:

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻ ԶՈՒՅԳԵՐ

Սլովենիայում եւ Լեհաստանում անցկացվող վոլեյբոլի տղամարդկանց աշխարհի առաջնությունում հայտնի են կիսաեզրափակիչի զույգերը:

Իտալիայի հավաքականը քառորդ եզրափակիչում 3:2 (24:26, 25:21, 23:25, 25:22, 15:12) հաշվով հաղթեց Ֆրանսիայի թիմին եւ եզրափակիչի ուղեգրի համար կմրցի Սլովենիայի թիմի հետ, որը 3:1 (18:25, 26:24, 25:19, 25:23) հաշվով պարտության էր մատնել ուկրաինացիներին:

Բրազիլիայի հավաքականը 3:1 (25:16, 23:25, 25:23, 25:21) հաշվով հաղթեց արգենտինացիներին եւ կիսաեզրափակիչում կմրցի Լեհաստանի հետ, որը պարտության մատնեց ամերիկացիներին՝ 3:2 (25:20, 27:25, 21:25, 22:25, 15:12):

Կիսաեզրափակիչի հանդիպումները տեղի կունենան սեպտեմբերի 10-ին Լեհաստանի Կատովիցե քաղաքում:

ՀՈՒՆԱ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏ

Հայաստանի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը մեկնել է աշխարհի առաջնության:

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում մեկնարկող աշխարհի առաջնությունում Հայաստանի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի ընտրանու կազմում հանդես կգան Ռուդիկ Մկրտչյանը (55 կգ), Գեւորգ Ղարիբյանը(60 կգ), Հրաչյա Պողոսյանը (63 կգ), Սլավիկ Գալստյանը (67 կգ), Մալխաս Ամոյանը (77 կգ), Կարապետ Չալյանը (82 կգ), Արթուր Ալեքսանյանը (97 կգ), Դավիթ Օվասափյանը (130 կգ):

Իսկ ազատ ոճայինների թիմում ընդգրկված են Մանվել Խնձրցյանը (57 կգ), Արսեն Հարությունյանը (61 կգ), Վազգեն Թեւանյանը (65 կգ), Արման Անդրեասյանը (70 կգ), Հրայր Ալիխանյանը (74 կգ), Արման Ավագյանը (79 կգ):

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՈՉ–ՈՔԻ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի անդամ Սարգիս Ադամյանը մասնակցել է Կոնֆերենցիաների լիգայի «Նիս»-«Քյոլն» հանդիպմանը: ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլի անդրանիկ տուրում «Քյոլն» արտագնա խաղում մրցել է «Նիսի» հետ: Հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝ 1:1 հաշվով: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Սարգիս Ադամյանը «Քյոլնի» մեկնարկային կազմում չէր, սակայն փոխարինման է դուրս եկել 56-րդ րոպեին:

● *Սեպտեմբերի 10-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա ներկայացում «Քաջ Նազար»: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ 19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում ասպիրանտուրայի ընդունելությունը:

Մերի Ղազարյան (24 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները: Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝կցելով հետեւյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի եւ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզու, ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3 x 4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից տրամադրված ավարտական փաստաթուղթը ճանաչվում է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի անդամ 47 երկրների (համաձայն Լիսաբոնի որակավորումների փոխճանաչման կոնվենցիայի), Ասիայի եւ Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրներ (համաձայն Ասիայի եւ Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման միջազգային կոնվենցիայի), Չինաստանի, Լիբանանի եւ Պարսկաստանի (համաձայն միջպետական համաձայնագրերի) կողմից:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյո՞ք եկամտային հարկի պարտավորություն է առաջանում:

Կարեն Գասպարյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները: Այսինքն, ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ՀՀ հարկային պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում՝ մրցույթներում եւ մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում տասը հազար դրամը չգերազանցող չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւան-Սեւան ավտոճանապարհին

«Բալի» հյուրանոցի մոտակայքում այրվել է BMW մակնիշի ավտոմեքենա: Այրվել են շարժիչի հատվածը, առջեւի անվադողերը եւ սրահը՝մասամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: